ՀՈՒՇԱԳԻՐ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ԵՎ «ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ» ՍՊԸ-Ի ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան 12.12.2023թ.

«Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը և «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ (այսուհետ՝ Կողմեր)-ն, ղեկավարվելով երկու կողմերի միջև կապերն ամրապնդելու և զարգացնելու փոխադարձ համաձայնությամբ, ցանկանալով զարգացնել երկկողմ հարաբերություններ կրթության ոլորտում, հաշվի առնելով, որ տեղեկատվության և փորձի փոխանակման համագործակցությունն առաջացրել է փոխադարձ հետաքրքրություն, համաձայնեցին Կողմերի միջև կնքել Հուշագիր:

1.ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Կողմերը, սույն Հուշագրի համաձայն, համագործակցում են կրթության ոլորտում՝ իրենց իրավասության շրջանակներում:

1.2 Սույն հուշագրի նպատակն է պահպանել, կատարելագործել և խթանել ոլորտի զարգացումը:

2.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2.1 Մշակել, իրականացնել համալիր միջոցառումներ:

2.2 Փոխանակել ոլորտին վերաբերող պարբերականներ, հրատարակություններ և այլ նյութեր:

2.3 Փոխանակվել ոլորտին վերաբերող սեմինարների, կոնֆերանսների և այլ միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությամբ:

2.4 Կողմերը, տարբեր միջոցառումների, ծրագրերի, դասընթացների մասնակցելու, տեղեկատվության փոխանակման, գործնական աշխատանքների անցկացման միջոցով, կնպաստեն համագործակցության ընդլայնմանը:

2.5 Կողմերը պատրաստակամություն են հայտնում համատեղ իրականացնել տեղեկատվական-վերլուծական, խորհրդատվական գործունեություն, համագործակցել

ցանկացած այլ գործունեության ոլորտում, որը Կողմերի միջև կառաջացնի փոխադարձ հետաքրքրություն:

3. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1 Սույն Հուշագիրն ուժի մեջ կմտնի ստորագրման օրվանից և կգործի անժամկետ:

3.2 Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

3.3 Կողմերից յուրաքանչյուրը կարող է Հուշագիրի գործողությունը դադարեցնել մյուս կողմին նախապես (գրավոր) զգուշացնելով:

3.4 Սույն Հուշագրի գործողության դադարեցումը չի խոչընդոտում Կողմերի կողմից Հուշագրի դրույթների իրականացման նպատակով համաձայնեցված այն նախագծերի և ծրագրերի կատարմանը, որոնք չեն ավարտվել Հուշագրի դադարեցման պահին:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն Հուշագիրը ստորագրվում է հավասարազոր 2 օրինակից ՀՀ պետական լեզվով՝ հայերենով:

4.2 Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերի հարաբերությունները կարգավորվում են փոխադարձ համաձայնությամբ:

«Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ ՀՎՀՀ 02232723 ՀՀ, ք. Երևան 0026, Արշակունյաց 40 Հեռ.՝ 010 44 07 32 010 44 14 03 Տնօրեն՝ Ա. Ղազարյան	**«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ** ՀՎՀՀ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիս Համբարձումյան փող., 19 շենք Հեռ.՝ +374-98-707008 +374-77-261201 Տնօրեն՝ Լ.Գասպարյան